



2016 թվականի օգոստոսի 26-ին, Թբիլիսիի Հայ գրողների և հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում հավաքվել էին Կրաստանում ՀՀ դեսպանության դիվանագետներ, Ջավախքի աջակցության հիմնադրամի ղեկավարները, Վիրահայոց թեմի հոգևոր դասը, համայնքային կառույցների ներկայացուցիչները, թբիլիսահայ մտավորականներ:

Հայ աշուղական արվեստի կարկառուն դեմք աշուղ Ջիվանու ((Սերոբ Ստեփանի Լևոնյան) ծննդյան 170-ամյակի տոնակատարությունը մեկնարկեց Մեծ գուսանի շիրիմին ծաղիկների խոնարհումով և հոգեհանգստյան արարողությամբ:

Բացելով հիշատակի միջոցառումը, Վիրահայոց թեմի մշակույթի բաժնի տնօրեն, «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Լևոն Չիդիյանը ներկաներին հրավիրեց մասնակցելու օգոստոսի 27-ին աշուղ Ջիվանու ծննդավայր Կարծախ գյուղում կայանալիք Ջիվանու ավանդական երգարվեստի մեծարման միջոցառմանը, որը կնշանավորվի աշուղական արվեստի մրցույթով և գուսանի տուն-թանգարանի հանդիսավոր բացմամբ:

Աշուղ Ջիվանու խոհա-փիլիսոփայական և ժողովրդական ստեղծագործության մեծարման և խոնարհումի խոսք ասացին բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանը, ՋԱՀ-ի նախագահ Սոս Սահակյանը, գործադիր տնօրեն Աշոտ Հակոբյանը, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայպետդրամայի թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը: Մեծ գուսանի ծոռնուհի, Արաքսյա դստեր թոռը՝ Գրետա Նիժարաձեն, երախտագիտության խոսքեր ուղղեց Ջավախքի աջակցության հիմնադրամին և Ախալքալաքի մունիցիպալիտետին, ում նախաձեռնությամբ և աջակցությամբ բացվում է իր մեծ պապի տուն-թանգարանը նրա ծննդավայրում:

Հուզիչ էր ներկաների կողմից Ջիվանու տապանաքարի ցողունը Կարծախ գյուղից բերված հող ու ջրով:

Միջոցառման ավարտին հավաքվածներին օրհնության խոսք հղեց Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Մեծանուն Ջիվանին անմահ է, քանզի նա ապրում է իր ծնող ժողովրդի հոգում իր երգերով, խոսքով որպես աշուղ,բանաստեղծ, մեծ հայրենասեր և անդավաճան ընկեր: Սրբազան հայրը մեծարման խոսքեր ուղղեց Ջավախքին և Ջավախքի արվեստասեր հայությանը, որը դարձել է հայապահպանության օրինակ, նաև հայ-վրացական բարեկամության անքակտելի օղակ:

Վիրահայոց թեմի առաջնորդի և հոգևոր դասի մասնակցությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն, որն ուղեկցվեց Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու երգչախմբի կատարումներով:



